

դիտեց եւ կշռեց նորա մտաւոր կարողութիւնը, որովհետեւ բոլոր այդ պատմութեան մէջ Սուրենի արժանաւոր գովութիւնները տալով՝ երիտասարդը երբեք իւր անձին պարծանքի փայլ չի տուաւ:— Իսկ ուրացութեան մասը Գրիգորը լռութեամբ անցաւ, վասնզի այդ, որ իւր սրտին վրայ կը ծանրանար՝ հազիւ թէ առանձին քահանայի մը խոստովանելու քաջութիւնը կը զգար, իսկ բազմութեան մէջ աշխարհաբարոզ լինիլ կ'արողութենէն վեր էր:

Թեպէտ Գրիգոր Թենիի սիրոյն վրայ սկսաւ յուսալ թեպէտ Սեթայի համակրութիւնը կը տեսներ, որ իր վրայ մօր խնամք կը ցոյցներ, բայց դժբախտութեան բովուց մէջ փորձեալ՝ հազիւ թէ հասակին գարունքը ոտք դրած հայր, մայր, քոյր, ազատութիւն, ստացուածք, իշխանութիւն, վերջապէս ամէն բան իրարու վրայ կորուսած՝ եւ որ աւելին է իւր ամենամերձ համասերունդ ազգականները տեսնելով, որ իւր մահուանը կը փափագէին եւ իւր կենդանութեանը զիրենք թշնամի նկատելով պարտաւոր եալ էր փախստեամբ իրենցմէ հեռանալ, շրջահայեաց կը մտածէր թէ միգուցէ՝ խաբուի՝ աղջկան եւ մօր կարեկցութիւնն ու գուրջ սիրոյ փոխանակ առնելով. ուստի յուսոյ եւ երկիւղի մէջ տատանեալ սիրտը կը ծփար, եւ դիպող ժամուն կը սպասէր Թենին առանձին տեսնելու: Բայց ամառուան եղանակին մէջ չէինք: Ոչ պարտեզ կար, ոչ ծաղկոց, ոչ ծովու հանդարտ գեղեցկութիւն, ոչ լուսնի քաղցր նշոյլ, բոլոր յոյսը գրքատան վրայ էր, ուր թերեւս կարելի լինէր առանձին տեսութիւն մը ունենալ:

Երեկոյին ընթերցին. Չաւէն այս եղերգին բոլոր պատմութիւնը, որուն ինք ականատես էր եւ որ իրեն կը վերաբերէր պատմեց պարզութեամբ եւ ամենքը արտասուքով լսեցին. Յուսիկ նաեւ հետաքրքրութեամբ ուշ կը դնէր ամէն պարագայից. եւ երբ կ'ես-գիշեր եղաւ եւ Գրիգոր իրենց ի Տարոնոյ խոհեմութեամբ հեռանալը պատմեց ու լռութիւն յաջորդեց՝ Ռշտունեաց Տիկինը կանգնեցաւ, եւ ամենքը ոտք ելան. «Ժամանակն ուշ է, որդեակ Գրիգոր,— ըսաւ մօտենալով,— մենք մոռցանք բու ճամփորդութեան յոգնութիւնդ յանգիր այս գիշեր, վաղը եւ ձմեռուան մնացորդն ունինք տեսնուելու համար: Իշխանը քանի մը օրէն կ'ուզայ, կ'իմանայ քեզ դէմ եղած անիրաւութիւնքը, իւր արդար հոգին չի կրնար հանդուրժել զրկանաց. անտարակոյս իւր բոլոր կարողութեամբ իրաւունքդ պիտի պաշտպանէ, եւ բու բոլոր քաշած նեղութիւնքդ ժամանակը պիտի մոռցնէ: Ես շատ ուրախ եմ, որ հօրեղբօրդ անիրաւութիւնը Ռշտունեաց հովանուոյն դիմելու քեզ բերաւ, դու իմ սիրելի եւ սուրբ բարեկամուհուոյս զաւակն ես, մի՛ զարմանար, եթէ մօր մը սիրտ զգամ քեզ համար, եւ կը փափագիմ, որ այս վիշտերուդ երջանիկ օրեր փոխանակեն»: